

ԶԵԿՈՒՅՈՒՄՆ.

Ներկայ թուով Արարատ ամսագիրս բարեթաղդ կհանդիսանայ ողջունելով ԺԱՐԴ շրջանը եւ կրկին բանափիտակն արդեանց յասպարէզ ներկայանարսվ իւրովսանն եւ խոհեմութեամբ յարատեւելոյ համար այն ջանից եւ նպատակին մէջ, որ Հայոց Եկեղեցւոյ եւ Ազգի համար կարեւոր, նպաստաւոր միանգամայն օգտակար է եւ հանգապազ կրնայ լինել, առանց երբէք դահավեժ եւ յանձնապատճն ընթացից եւ անխորհուրդ թելադրութեանց մատնուելոյ, յուսալով որ ըստ այսմ պիտի յաջողի հանգարտութեամբ, բայց անշուշտ եւ անվրէպ ժամանել իսկական նպատակին եւ հանրաշահ արդեանց:

Թէպէտ անցեալ շրջանի սկզբում այս ինքն անցեալ **1877** ամի առաջին թուոյն յայտարարութեան մէջ խոստացուած, ինչպէս նաեւ կարեւոր պատրաստութիւնքը ըստ բաւականին հոգացուած էր, որպէս զի ներկայ շրջանում բաւական մեծ եւ կարեւոր փոփոխութեամբք Արարատ ամսագիրը ի հանդէս ելնէր, սակայն յակամայից ստիպուած անհրաժեշտ հարկ եղաւ ներկայ պատերազմական դառն հանգամանաց վերայ ուշադրութիւն դարձուցանել, եւ զգուշանալ ծանր ծախսերէ, մինչդեռ օրական լրաթերթերը ներկայ հանգամանկներում կարող են բաւական օգուտ տալ եւ փոխադարձաբար քաղել, ընդհակառակին բանասիրական

թերթերը աւելի վնասուց կհանդիպին մանաւանդ այսպիսի
տեղերում, ուստի պէտք եղաւ առ ժամս ոչ ինչ փոփոխու-
թիւն չանել եւ շարունակել անցելցյն դրութեամբ եւ
ծրագրով. մինչեւ որ Աստուծոյ ողորմութեամբ խաղաղու-
թիւնը եւ վատահովթիւնը ամենուրեք վերականգնի, եւ
այն ատեն աներկիւղ եւ անկասկած կարելի լինի ձեռնար-
կել խոստացեալ կարեւոր բարեփոխութեանց, որոյ վասն մեր
սիրելի եղբարք եւս անշուշտ ներողամիտ պիտի լինին:

Աւելորդ է կրկնելը, որ Արարատը ներկայ դիրքով եւ
իւրաքանչիւր ամիս քառասնական երեսներէ քաղկացեալ,
ցարունակած ուղղութեամբ եւ ծրագրով պիտի հրա-
տարակուի, եւ ճանապարհի ծախքով ի միասին տարեկան
բաժանորդագինն է Ռուսաստանի համար Յ որդ: Իսկ այլ
տեղեաց եւ գիտելեաց համար ցանկացողները կհրաւիրուին
կազմին երորդ երեսի վերայ հրատարակուած պայմաններէն
քաղել եւ իմանալ աւելի կարեւոր եղած տեղեկութիւնքը:

Հ Յ Ա Վ Ա Ր Ա Յ Ա Վ Ա Ր Ա Յ

1781 յունիս միջին օրս Նորվիյի համայնք յանդան ամսէնի
ճանապատճեն ջն մաս Ա սպասարկութիւն միա մի մասնակիութիւն
աւագ ուոց զգացման առաջարկութիւն գուշակ շնոր սիրուն
աւագ Նորվիյի բարեկամ ոք սիրուն ոք ճանապատճեն միմայ
տման պահանջութիւնը ու անուշանութիւնը ու ճանապատճեն միմայ
մաս ճանապատճեն բժիշկային, միջան ովհին ովհին և զրոյ
մաս մասուր մայնակացնութիւն բայցըն այս թիւն ոչ ճանա-
պատճեն ու յանաբանացը մատ վերաբարեց բայցի բանակուր
զգացման մասնակիութիւնը անուշանութիւնը ազգային ու ճանա-
պատճեն մասնակիութիւնը ու բայցի Նորվիյան ճանապատճենը բայցըն